46. ԻՐԵՔ ՕՏՆԵՆ ՁԻԱՎՈՐ ԱԽՉԻԿ

Թագավորիմ՝ իրեք տղա կէղնի, կիգա օր կհընկնի հիվանդ, մեռնելու դուռ կէղնի, կկանչե զտղեկներ, կասե.—Լա՛ռ, ֆըլան սար չէրթաք։

Օրըմ տղեկներ հ՝իրարու վրեն ժողված ին, հ՝իրարու ասին.

— Ի՞նչ կէղնի օր մըր հեր ասեց՝ Մշու սար, ասիմ, մ՝էրթեք։

Մեծ տղեն ասեց.—Վալա՛յի, ես իմ հոր անկաճ չըմ էնի, մըր հեր չուզե մենք ուտինք, խմինք, քեֆ ու ուրախութեն էնինք։ Ես կհէլնիմ էրթամ էդ սար, իշքիմ տեսնամ ի՞նչ կա ու դառնամ հ՝իգամ։

Հ՝էլավ մեծ տղեն գնաց։ Գնաց տեսավ օր բաղ ու բաղչա, արև ու բարև, դոլ ու ղուռնեն կղարկե։ Ասեց. «Իմ հեր ճանավարութեն կէներ, չուզեր օր մենք հ՝իգենք զէդա տեսնեք»։

Հեղըմ լէ տեսավ օր մութ ամպըմ հ՝էլավ, թոզ ու դումանըմ էրեց, էնդիեն հ՝էլավ իրեք օտնեն ձիավորըմ, թալեց զտղեն թարկին, առավ ու գնաց։

Մնաց շաբաթըմ, միշնեկ ախպեր տեսավ օր մեծ ախպեր գնաց ու չէկավ, ասեց.—Մըր պապու թանբին մըր վրեն էր, մենք անկաճ չէրինք, իմ ախպեր գնաց ու չէկավ, կանի, ես լէ հ՝էլնիմ, էրթամ տեսնամ իմա՞լ էղավ ու հ՝իգամ։

Հ՝էլավ գնաց, տեսավ օր բաղ ու բաղչե մը, կուտին, կխմին, դոլներ գըմըռ-գըմըռ կզարկին։ Ասեց. «Իմ հեր էդա բան հ՝ապով,

զայեր, զմզիկ չըր թողեր հ՚իզենք, չուզեր օր մենք ուրախութեն, կեր ու խում էնենք»։

Քիչըմ լչ մնաց, տեսավ օր սև ամպըմ հ՚էլավ, փոթորիկըմ էրեց, հ՚էրկինք ու զետին մթնեց, էնդիեն էկավ իրեք օտնեն ձիավորըմ, թալեց զտզեն թարկին ու առավ գնաց։

Ըստհաղ զպզտիկ տղեն տեսավ օր ախպրտանք չէկան, ինք հ՚էլավ, հ՚ընկավ ճամբախ, գնաց։ Օր կէրթա ճամբու հետ, հալվորըմ հ՚ըռաստ կիգա։

— Բարև՛ քի, աղեկ կտրիճ մանուկ։

Տղեն կասե.—Աստծու բարին քի, աբո՛։

— Աղեկ կտրիճ մանուկ, դո՞ր կէրթաս,—կասե հալվորն։

Տղեն կասե.—Իմ հերն օր մեռավ, մզիկ օսյաթ էրեց, օր էդա սար չէրթանք, իմ ախպրտանք անկաճ չէրին, հ՚էլան գացին ու չէկան, հրմկա էկեր իմ, կէրթամ իմ ախպրտոց հ՚ետևեն։

Հալվորն ասեց.—Աղեկ կտրիճ մանո՛ւկ, մադամ օր զքու պապու խրատ չըս վերցուցի, ես խրատըմ կիտամ քզիկ, զիմ խրատ վերցու, բըլե չվախենաս։ Հալվորն ասեց.—Լաո՛, դու կէրթաս, հանդե իրեք օտնեն ձիավորըմ կիգա քու հ՚առեջ՝ չվախենաս, զքըզիկ պահե, ինք զքզիկ չտեսնա, կէրթա կմտնի ուր տուն, էնի ախչիկ է, գնա գողտուկ հ՚ետևեն, մտի ձիու հ՚ետև։ Ախչիկ կհ՚իջնի ձիուց, կհ՚էլնի վի, կէրթա հանե զուր հալվրներ, շոգռեր է, օր բռհաթի, քանի զուր հալվրներ ու զուր ջապիկ չհաներ է, ուրեն չմոտենաս, օր հանեց զուր շապիկ, դու կհ՚էլնիս, գողտուտիկ հ՚ետեվանց կբռնիս զծամեր։ Ջըս թողի, ինչ օր կասե՝ չավտրնաս. եր օր ասեց. «Հացն ու գինին, տեր կենդանին մըր մեջ վկա թըղ էղնի, ես քզիկ, դու ընծիկ», նոր՝ կթողիս։

Տղեն հեծավ զուր ձին, գնաց, գնաց հ՚էլավ Մշու սար, ասիմ, տեսավ բաղ ու բաղչեմ՚ օր աշխըրքի մեջ հրմալ բաղ ու բաղչա չըր էղի. մեկ դին՝ դոլ կզարկեր, մեկ դին՝ զուռնեն կփչեր, կուտեն ու կխմեն։

Տղեն ասեց. «Էդ հրմլա բան լէ կէղնի՞». զինք տվեց ծառում՚ տալդեն ու նստավ։ Մեկ լէ տեսավ օր էնդիեն իրեք օտնեն ձիավորըմ հ՚էլավ, փոշիմ՚ էրեց օր մարդ մեջ կկորեր ու էկավ բաղչի դին։ Տղեն ասեց. «Հալվորու ասած ձիավորն օր կասեր էդա էղնելու է», զինք տվեց տունտուճիկ տեխըմ, պատվրտավ։

Ախչիկն ասեց.—Թերմչի ձիու բերան հ՚էսօր նեճիր չհ՚ընկե՞ր է, կատղեր է, զուր միս կուտե։

Ախչիկն օլբրդավ, բան չհ'ընկավ ձեռք, դարձավ դարդակ էկավ։ Ախչիկն օր էկավ, տղեն հ'ընկավ հ'ետև գողտուկրմ էկավ։ Էկավ ձիու հ'ետև պատվրտավ։ Ախչիկ հ'իջավ ձիուց, հ'էլավ վի, ղշորեր կփոխեր, քրտներ էր, տղեն գողտուտիկ հ'էլավ, գնաց քունճրմ պպղավ։ Ախչիկն հանեց ղհալվրներ վրավեն, օր մնաց ադամու կաշով, մերկ ու մատորան, տղեն վաղեց ղձեռք թալեց ծամեր, քոնեց։

Ախչիկն ի՞նչ էրեց, ասեց.—Տղա՛, թող զիս, կառնիմ ղքլիկ,—տղեն անկաճ չէրեց։

Ախչկա ճար կտրավ, ասեց.—Հացն ու գինին, տեր կենդանին վկա թող էղնի մըր մեջ, օր ես քզիկ, դու՝ ընծիկ,—նոր թողեց։

Առան զիրար։ Ախչիկն ասեց տղին.—Ախը՛ր, դու զիս շատ չարչրեցիր, դիր զքու չոք, քիչըմ զիմ գլուխ դնիմ վրեն, պառկիմ քնիմ, ըռհաթիմ։

Տղեն օր դրեց զչոք, աղչիկ դրեց զգլուխ քնավ։ Քթվեց ղաղչըկա գլուխ, տեսավ օր հանգուցըմ կա էդոր ծամերու մեջ։ Դրեց զախչկա գլուխ գետին, զհանգուց հարձրկեց։ Օր հարձրկեց, մեչն հ'էլավ հարեր հատ բալնեք, առավ ու հ'ընկավ էդ հ'օդեք։ Բացեց տեսավ օր քիմիսին նալբանդ է, քիմիսին թարզի է, քիմիսին նաճար է, քիմիսին հաց կկողե, ինչ սանյաթի տեր օր ասիս կեր հ'ոդի, էդ բաղչի մեջ։ Ախչիկ քոմեր էր լցե բաղչի մեջ ու ամեկուն մեկ-մեկ հ'օդա շիներ էր, դրե մեջ, կփակեր զդուռ վրը ուրանց, կէրթեր կիգեր։ Գնաց դուռըմ լէ բացեց, տեսավ օր էդ լէ ուր ախպըրտոց հ'օդեն է։ Բացեց զհ'օդի դուռ, թողեց զախպըրտանք գացին։ Օր զէդոնք զըմեն ճամբու դրեց գացին, էկավ հ'օդիմ՝ դուռ լէ բացեց, տեսավ օր աչկունքըմ կեր հ'ոդի։ Էդ աչկունքի մեջ պըդրկի չափ բանըմ կեր դրուկ, դու մ'ասի, էդի ախչկա շապիկն էր։ Օր զէդ հ'օդի դուռ բացեց, ախչիկն կռահեց, ըսեց.—Տղա՛, դու ու քու աստված, էդ շապկի հետ մը խաղա, քամին կթոցու քու ձեռքեն, տանե թալե մըջ ծովուն, օր թալեց մըջ ծովուն, հանդե ես կէրթամ քու ձեռքեն, էլ զիս չըս կրռնա գտնա։

Տղեն ասեց.—Մադամ օր դու էդ շապիկ հ'ապով իմ ձեռքեն կէրթաս, օրըմ հ'առեջ գնա,—ասեց ու զշապիկ թալեց մըջ ծովուն, ախչկան անկաճ չէրեց։

Էդ շապիկն էր, օր ընկավ մըջ ծովուն, քամին վերցուց ու առավ գնաց։ Կտանե թագավորիմ՝ քոշկի դուռ կհանե դուրս, էդ

թագավորին լէ տղեմ՝ կեր, նշանլու կէղնի, հ՚էն օր լէ զհարսնեք ռոնած ին։

Շապիկն օր կիգա կհ՚էլնի էդ տեխ դուրս, թագավորի տղեն զէրկու օտք կոնե մեկ սոլի մեջ, հա՛ էդա էրթամ, հա՛ էդա հ՚իգամ, ես ղէդ նշանլուն չըմ առնի, իմ օր կա՝ էդա շապկի տերն է, չկա՝ էդա շապկի տերն է։

Հ՚էլավ էրեց ձիավոր ու խոշում ճամբեց գնաց, օր էրթան զէդ շապկի տեր առնեն հ՚իգան։ Ձիավորտանք հ՚էլան, հարցուցին՝ իրեք օտնեն ձիավոր ախչկա տուն հ՚ո՞ւր է։ Ցուցուցին, ասին՝ հանդ է ֆըլան սարու գլուխ։

Էկան, էկան իրեք օտնեն ձիավոր ախչկա հ՚էրկիր, հ՚էլան դուրս։

Տղեն լոպկեց զուր թուրն ու հ՚ընկավ ձիավորտաննու մեջ, ջարդեց, մեկ ձիավոր մնաց, քակեց զակռեք, շարեց ձիավորի ճակատ։ Ասեց.—Գնա՛, քու աղին ասե, ձիավոր կա՞, թըղ ճամբե հ՚իգա, էդի անճախ ընծիկ ակրատ էղավ, կեսօր լէ թըղ ճամբե հ՚իգա։

Ձիավոր գնաց, ասեց.—Ալ ու քեֆյաթ հմլա էղավ, գացինք օր դախչիկ բերինք, անաստված ձիավորըմ քաշեց զթուր, հ՚ընկավ մեջ մի, ջարդեց, զիս մինակ թողեց, ասեց. «Գնա, քու աղին ասե, էդոնք անջախ ակրատ էղան ընծիկ, կեսօր թըղ ճամբե հ՚իգաս»։ Թագավորի տղեն հ՚էլավ, հիսուն ձիավոր լէ ճամբեց, ասեց.—Գացե՛ք, բալքիմ դուք առնեք ու հ՚իգաք։

Ձիավորտանք օր էկան, տղեն բռնեց, ղըմեն լէ սպանեց, մեկ հատ թողեց. քակեց զակռեք շարեց ճակատ, ասեց.—Գնա՛, քու աղին ասե, էդ օր կճամբե բուռնութի չէղնի ընծիկ, մարդ էլ կա՞, թըղ ճամբե հ՚իգա։

Ձիավորն էկավ ասեց։ Պառավըմ հ՚էլավ գնաց, ասեց թագավորի տղին. «Թագավո՛ր ապրած կէնա, մեղք ին քու ասկըրներ կիտաս ջարդել, էլ մարդ մը՛ ճամբի էրթա, ես կհ՚էլնիմ էրթամ, առնիմ հ՚իգամ»։

Թագավորի տղեն ասեց.—Օր դու էրթաս առնիս հ՚իգաս, խուրճիմ՚ օսկի կիտամ քղիկ։

Պառավն ասեց.—Քու խուրճի քզիկ թըղ էղնի։ Մինակ քենե կհ՚ուզիմ օր բերի, էն հ՚առջին գիշեր քու ծոցք պառկելու տեխ հ՚իգա իմ ծոց պառկի։

Թագավորի տղեն ասեց.—Թը՛ղ էղնի, դու գնա բի, հ՚առջին գիշեր քու ծոցք թըղ պառկի։

Հ՝էլավ պառավ, առավ զուր ճոկան ու տրքտրքալեն գնաց, իրեք օտնեն ձիավոր ախչկա տուն հ՝էլավ դուրս։ Գնաց օր կհ՝էլներ թարանճեք, ախչիկն հա՜յ հա՜յ լանկեմ՝ տվեց պառվու գլխուն, հրլոնտեց տվեց թարանճից ցած։

Իրիկն հ՝իրկուն կիգա կասե կնկան.—Հ՝որի՞ զարկիր իս զէդ պառավ տվե թարանճից ցած, խեղճ է, անորթի մեր է, թրղ հ՝իդա ուրեն քունճրմ կուճարի։

Ախչիկն կասե.—Էդ պառավ էկեր է զիս կտանե։

Տղեն կասե.—Էրկու հեղ խոշում էկան վրը ընծիկ, չկացան զքզիկ տաներ, էդ գռեխռուկ պառա՞վ պիտի տանե։

Ախչիկն կասե.—Հա՜։

Ախբր տզի վրեն չկառնա, կառնե զպառավ բերե վի։

Պառավ տրքտրքալով հ՝էլավ էկավ վերին դին, քանիմ՝ օր մնաց, էղավ տնեն։ Օր ընտելցավ, օրըմ ասեց կնկան.—Ախչի՜, փորձե զքու իրիկ, տեսնաք ուր խվաթ ի՞նչ է։

Ախչիկ հ՝իրկուն կհարցու կասե.—Մա՜րդ, քու խվաթն ի՞նչ է։ Իրիկ կնիկ է, գիշեր պառկուկ կէղնին հ՝իրարու խեչ, օր հ՝իրարու հետ կխոսան, պառավ կիգա կանի գլխու ուրանց, անկրճդրութեն կէնե։

Տղեն կասե.—Իմ խվաթ ավլի մեջն է։

Պառավ կլսե։ Լուսուն օր կհ՝էլնի, ախչկան կհարցու.—Հարցուցի՞ր, ի՞նչ ասեց,—հալբուքի հ՝ինք դիներ։

Ախչիկն ասեց.—Հարցուցի, ասեց՝ իմ խվաթ ավլի մեջն է։

Գնաց առավ զավելն էկավ, մրհանա էրեց, թե զթունդրան բոլոր կավլիմ, վերուց զավել թալեց թունդիր։

Հ՝իրկուն օր էղավ, տղեն դարձավ էկավ։ Պառավն ախչկան ասեց.—Տեսա՞ր քու իրիկ զքզիկ չուզե, աչք դուրս է, օր դուրս չէղներ զօղորդ կասեր։

Պառկան քնան, ախչիկ զպառեկ դարձուց տզի դին ու քնավ, իրիկն ինչ էրեց, չդարձավ ուր դին։

Ասեց.—Կնի՜կ, աստված զխեր էնե, հ՝որի՞ն իս ըռկի։

Կնիկն ասեց.—Ես չըռկիմ, վո՞ր ըռկի, հ՝էրեկ հարցուցի քինե, ասի՝ մարդ, քու խվաթն ի՞նչ է, ասիր՝ ավելն է։ Զիս խաբեցիր, էդ խը՞դար հազ կէնիս հ՝իսնե, էլ ի՞նչ դառնամ քու դին։

— Կնի՜կ, դարցի էդա դին, զօղորտ կասիմ հ՝էսօր։

Պառավ մեկ լէ էկեր էր նստի գլխու ուրանց անկրճդրութեն կէներ։

Տղեն ասեց.—Կնի՛կ, իմ խվաթ էդա թրի ու ուր բալլըղի մեջն է, օր զթուր քաշին ուր թամքեն, թալին ծով, իմ խվաթ կէրթա, ես լէ կհ՚ընկնիմ մեռնիմ։

Պառավ կլսե, կէլնի կէրթա, քուն օր կընցնի վրր ուրանց, կէլնի զթուր քաշե բալլխի մեջեն, կբերե կանի ծովու պռուկ ու հա՚յ, հա՚յ՝ ծովու մեջ։ Օր զթուր կթալե ծովու մեջ, կիգա զախչկա ծամեր կփաթե վրր մատին, ք... քու պապու բերան, հ՚ար ե՞ք օլրրցուս քու հ՚ո... ետև։ Կիտա հ՚առեչ, կառնե կիգա։ Կբերե, կիտա թագավորի տղին։

Թագավորի տղեն լէ կասե.—Ախը՛ր, ես քզիկ խոսք իմ տվի, առ տար, հ՚էսօր գիշեր դու պառկի խեչ, վաղ գիշեր բի տուր ընծիկ։

Պառավն առավ զախչիկ ու գնաց։ Գիշեր պառկավ խեչ, լուսուն հ՚էլավ, բերեց թասլիմ էրեց թագավորի տղին։ Էդոր մանեն լէ ի՞նչ էր, օր պառավ հ՚առչին գիշեր պառկավ ախչկա խեչ. յանի՝ էրկու հեղ էդա խդար ձիավոր ճամբիր, չկառցավ բերեց զէդ ախչիկ, ես գացի բերի, լայեղ է օր էնի իմ խեչ պառկի։

Պառավն է, օր տարավ զախչիկ, թասլիմ էրեց թագավորի տղին, թագավորի տղեն բերեց, կապեց փարդեմ՝ ու զախչիկ դրեց հ՚ետև։ Բռնեց զհարսնեք ու ութն օր հարսնեք էրեց։

Էդոնք թըղ մնան հ՚ոդի, մենք դառնանք տղի վրեն։ Պառավն է, զթուր օր թալեց ծով, տղեն ըեհ՚ուշ էղավ, հ՚ընկավ գետին։ Էդ տղին լէ իրեք քուր կեր, մեկն ֆալչի էր, մեկն էրազ կիշքեր, մեկ լէ՝ լողորդ էր։

Օրըմ հ՚իրարու վրեն քոմուկ ին, ֆալչի քուրն ֆալ բացեց, տեսավ օր ախպեր շատ բեճար հիվանդ է, ասեց քուրվրտոց.—Քուրվրտի՛ք, մըր ախպոր ճար մանցեր է աստված, պառավրմ էկեր է, քաշե զմըր ախպըրկին առեր է գացե, հ՚էլեք էրթանք օր հասնինք։

Հ՚էլան էկան, տեսան օր ախպեր ուրանց բեհալ հ՚ընկուկ է, վերջին տուր ու տափն է։ Ֆալչի քուր կիշքե օր ախպոր թուր հանգե մըջ ծովուն։ Լողորդ քուր կհ՚իջնի ծովու մեջ, կառնե զթուր կիգա, կզարկե բալլըղի մեջ, կբերե կախե ուր տեխ։ Օր կբերե կախե, տղեն կճըմըլտկա, հ՚էլնի նստի, կասե.—Ի՞նչ խրտար իմ քնի։

Քուրվրտիք կասին.—Տնաջե՛ն, ինչ քնել է, դու մեռուկ էր, քու թուր հանդ էր մըջ ծովուն, մենք էկանք, գացինք, հանինք, առանք էկանք, զարկինք տեխ, նոր հ՚էլար կանար։

Էդ տեխ օրըմ լէ կմնան հ'իրարու խեչ, քուրվըտիք կմնան տան պահապան, տղեն կհ'էլնի հ'ընկնի ճամբախ կիգա։ Կիգա էդ թագավորի տղի քաղաք կհ'էլնի դուրս։ Կէրթա գզրի տուն, կէղնի խոնախ։ Կտեսնա, օր դոլ ու զուռնի ձեն կիգա, կհարցու կասե.— Էդ ի՞նչ դոլի ու զուռնի ձեն է։

Կասին.—Մըր թագավորի տղին կնիկըմ ին բերած, էդա ութն օր հարսնեքն է, հըմկա զաղուն առեր է ձեռք, կխմե, չպսակվի, կասե. «Էդա հ'իգամ, էդա էրթամ զաղուն կխմիմ, չըմ առնի»։

Տղեն կասե գզրին.—Խուրճինըմ օսկի իտամ քզիկ, տուր ղէդա մատնեկ քու ախչիկ, թըղ առնե, էրթա իտա էդ ախչիկն ու հ'իգա։

Տվնց զմատնեկն, գզրի ախչիկ առավ, գնաց։ Գնաց տեսավ, օր ախչկներ ու կնկտիք թափուկ ին փարդի բոլոր, մեկ չիշխընա ներս էրթա։

— Ընծիկ լէ տեխըմ տվեք թամաշա էնիմ, հըլոնդեց զախչըկներ, տվեց էն դին, էկավ փարդին մեկ կուշտ կանավ, մատնեկ լէ հանդ էր էձգուկ մատ, խրստու բռնեց ղփարդին, փետն ու զմատնեկ էրեց ախչկա դին օր տեսնա։

Ախչիկ օր զմատնեկ տեսավ, ճանչցավ, կանչեց զախչիկն, ասեց.—Արի՛ հ'ոդա։

Ախչիկն օր գնաց, ասեց.—Էդ մատնըկի տեր հ'ո՞ւր է։

Ախչիկն ասեց.—Հանդ է մըր տուն։

Ախչիկն ասեց.—Գնա ուրին ասե, թըղ հազըրվորի հանդ է ես մհանա կէնիմ, կէլնիմ հ'իգամ, առնիմ զինք ու էրթամ։

Ախչիկն օր գնաց, իրեք օտնեն ձիավոր ախչիկն մըհանա էրեց, ասեց.—Թագավորի տղեն թըղ դալալ իտա բոռալ. մարդ չէլնի դուրս, էլնիմ էրթամ բաղնեկ լողկնամ, հ'իգամ առնիմ զինք։

Թագավորի տղեն ավտրցավ, տվեց դալալ բոռալ, օրձեղեն չմնաց դուրս. ախչիկն հ'էլավ գնաց գզրի տուն, տեսավ օր տղեն կանուկ է, թալեց թարկին ու քշեց։ Քշեց գնաց ուր տուն իջավ, ֆալչի քուրն ասեց.—Ախպե՛ր, հազըր կեցի, թագավորի տղեն խոշում էրեր է, կիգա վըր քզիկ։

Լուսուն հ'էլավ տեսավ օր սար ու ձոր էղեր է սև ասքյար ու կիգա։

Քաշեց զթուր հ'ընկավ մեշ ուրանց, գլխեն ջարդեց, հ'իջավ տակ, տրկեն ջարդեց, հ'էլավ գլուխ, մենակ մեկ ձիավորըմ թողեց, քակեց զակոեք, շարեց ճակատ։ Ասեց.—Գնա՛, քու թագավորին

ասե, ինք թըղ հ՚իգա, էն օր ուր միտք գրեր է, չէղնի, ղէն ակռեն թըղ քաշե թալե։

Զիավորն օր գնաց, ասեց թագավորի տղին, հըտ գահուն, դամ-լեն կաթաց, հ՚ընկավ մեռավ։

Նոր ախչիկն ու տղեն նստան, կերան ու խմեցին, հար մե-ռան։

Աստծուց հ՚իշավ իրեք խնձոր. մեկ՝ ասողին, մեկ՝ լսողին, մեկ չէ՝ անկաճ էնողին։